

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2010

## ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

#### *Հարգելի՛ դիմորդ*

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1 Ո՞ր շարքի բոլոր բառերում է բաց թողած *է* տառը.

- 1) դող-րոցք, առ-ջ, թ-որեն
- 2) ան-ական, ելև-ջ, հյուսկ-ն
- 3) այգե-տ, մանր-, ա-կ
- 4) լուս-դ, էթիլ-ն, վայր-ջք

2 Ո՞ր շարքի բոլոր բառերում ուղղագրական սխալ *չկա*.

- 1) դշխեն, սրդողած, տարերք
- 2) երփներանգ, թերմածք, անհեթեթ
- 3) արհամարհել, անբասիր, հեղեղատ
- 4) բարվոքել, սուսամբար, ճմրթված

3 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում է գրվում *ւ*.

- 1) հոգ-որ, ագ-որ, ուղ-որ
- 2) գեր-արել, արժ-որել, եղ-նուտ
- 3) հոգ-արք, եղր-անի, գոտ-որված
- 4) կար-որ, կար-եր, ար-առ

4 Ո՞ր շարքի բոլոր բառերի բաց թողած տեղում պետք է գրվի *յ*.

- 1) հեռանա-ի, վերարկու-ի, բարձրացնե-ի
- 2) գա-իսոն, Եսա-ի, դշխո-ական
- 3) հա-ելի, միլ-արդ, ժան-ակ
- 4) Սոչի-ում, Ռաֆա-ել, արքա-որդի

5 Ո՞ր բառում է ընդգծված *ե*-ն արտասանվում *յէ*.

- 1) փութ**ե**ռանդ
- 2) ռնգ**ե**ղջյուր
- 3) ան**ե**րևակայելի
- 4) համա**ե**վրոպական

6 Ո՞ր շարքի բոլոր բառերն են գրվում միասին.

- 1) լի(ու)լի, մի(անձնյա), բառ(հանելուկ), լույս(ընծայում)
- 2) նոր(անկախ), ռոմանա(գերմանական), լեզվա(ոճական), ներս(առնել)
- 3) հաց(ազգիներ), թեյ(ըմպուրյուն), սոցիալ(դեմոկրատ), հաշվե(քանոն)
- 4) այլ(ընտրանք), Սևան(հէկ), դժվար(ընտել), տաս(կոպեկանոց)

7 Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների ու կապակցությունների բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով.

- 1) ՄԵԾ ՀԱՅՔ, ԼՅՈՒԴԴԻԿՆՍ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ, ԱԶԳԵՐԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
- 2) ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԴԺՈՒՔ ՀՐԱՅՐ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԹՈՒԹՄՈՍ ԱՌԱՋԻՆ
- 3) ԴԵՂՁՈՒՆ-ԾԱՄ, ԿԱՐՈԼԻՆԳՆԵՐԻ ԱՐՔԱՅԱՏՈՂՍ, ԻՍՐԱՅԵԼ ՕՐԻ, ԼՅՈՒԴԻԿ ՎԱՆ ԲԵԹՅՈՎԵՆ
- 4) ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ, ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԻ ՄԵԾ ԴՔՍՈՒԹՅՈՒՆ, ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՀԻՍՈՒՍ ՆԱԶՈՎՐԵՑԻ

8 Ո՞ր շարքի երկինջուներն են ճիշտ ընդգծված.

- 1) հայնպաստ, մնյուն
- 2) Միքալեյան, թեյարան
- 3) խաղալի, խոլանք
- 4) Իսրայել, բայլկան

9 Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին վանկը *չի* շեշտվում.

- 1) դստեր, մոսկովյան
- 2) շուրջբոլորը, հուշատետր
- 3) համակարգիչ, համակարգչային
- 4) հետհասցե, երրորդ

10 Ո՞ր նախադասության մեջ կա հապավում.

- 1) Նորաստեղծ անտառտնտեսության աշխատակիցները ամեն գնով պահպանում են երիտասարդ անտառ-արգելոցի յուրահատուկ ծառատեսակներն ու թփերը:
- 2) Ուսումնական հաստատությունը առանձին ցուցասրահներ է տրամադրել գիտահանրամատչելի ու գիտամշակութային գրականության համար:
- 3) Հիմնարկի ղեկավարությունը պակաս աշխատատեղեր ունենալու պատճառով սահմանել է խիստ պատասխանատու աշխատակարգ:
- 4) Երկու տարվա՝ զինավարժանքներով լի ծառայությունը շատ արագ հասավ իր վերջնագծին ու անփոփոխ մի դարչնագույն զինվորական գրքույկում:

11 Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ *չկա*.

- 1) Մայրենին քնած արծիվ էր..., որը մի շողքից աչք էր բացել, թպրտում էր հոգում:
- 2) Եվ նստում են հոգնաբեկ ահա սրտիս վրա ծեր Ու հորանջում են տխուր - օրերս հին ու անցած:
- 3) Եվ երբ հեռավոր հարթավայրում արևը նոր է թեքվում դեպի արևմուտք, Մթնածորում ստվերները թանձրանում են:
- 4) Տարիներ, տարիներ կսահեն, Կմեռնեն երազները բոլոր - Քո պատկերը անեղծ կպահեն Օրերում անհաստատ ու մոլոր...

12 Հակահիշների ո՞ր շարքում կա *ոչ հակահիշ* բառազույգ.

- 1) ցոփ-ժուժկալ, լայնարձակ-անձուկ, օրինական-ապօրինի
- 2) ուղղագիծ-կորագիծ, պարզ-պղտոր, վեհանձն-փոքրոգի
- 3) խայտաբղետ-խայտաճանուկ, մարմանդ-թեժ, կողմ-դեմ
- 4) վրա-ներքո, բանուկ-սակավագնաց, պակաս-լրիվ

13 Տրված բառերից քանի՞սը կմիանան *սիրտ* բառին՝ կազմելով դարձվածք (բառերը տրված են ուղիղ ձևով).

*Ծայր, ունենալ, սիրտ, դող, խփել, ձայն, ասել, նեղվել, աչք:*

- 1) բոլորը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) յոթը

14 Յոմանիշների ո՞ր շարքում կա *ոչ հոմանիշ* բառազույգ.

- 1) թյուր-ճիշտ, հանգույն-նման, ընդդեմ-հակառակ
- 2) երեց-ավագ, խարազան-մտրակ, հեծել-տանջվել
- 3) պարագիծ-շրջագիծ, որոմ-մոլախոտ, համբակ-տոգետ
- 4) երկնչել-երկյուղել, ընծյուղ-ոստ, խաժանուժ-խառնամբոխ

15 Տրված բառերի արմատներից որի՞ն *չի* կարող միանալ *առ-* նախածանցը (առանց երկրորդ ածանցի).

- 1) անցյալ
- 2) հավիտյան
- 3) երևույթ
- 4) ողջախոհ

16 Տրված բոլոր բառերն ունեն ընդհանուր արմատ, բացի մեկից. ո՞ր շարքում է այդ բառը.

- 1) բարեկենդան, կենսուրախ
- 2) նստակյաց, կացութուն
- 3) բարեկեցիկ, երկկենցաղ
- 4) անկյանք, կենարար

17 Տրված շարքերից որի՞ն էրկու բառն էլ ունեն իրենց համանունը.

- 1) ցող, ցողուն
- 2) ամպ, ամպեր
- 3) փող, փողավոր
- 4) այրի, այրել

18 Ո՞ր շարքում են միայն անհոգնական գոյականները.

- 1) լող, արհամարհանք, երկիր
- 2) տխրություն, ռոմանտիզմ, քիմիա
- 3) խմելիք, ֆիզիկա, Նիդեռլանդներ
- 4) զենք, Արագած, կենսաբանություն

19 Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգնակին է կազմվում - *ներ* վերջավորությամբ.

- 1) դիտանցք, քարափ, վերելք, հարացույց
- 2) դրոշմահատ, բերդապահ, վագր, տեսակետ
- 3) եզր, ֆիդայի, պատճեն, հարցաշար
- 4) հաշվապահ, ներքնաձիգ, ստուգարք, հրաբուխ

20 Ո՞ր շարքի բոլոր բառերն են պատկանում -*ա-* ներքին հոլովման.

- 1) աղջիկ, տոհմանուն, գալուստ, գումարում
- 2) հայրանուն, սուրանկյուն, աշուն, խիզախություն
- 3) վարժություն, ազգանուն, հենասյուն, բութանկյուն
- 4) արյուն, ծանրություն, ամառ, Մանուկ

21 Տրված նախադասություններում քանի՞ կապակցություն կա, որոնցում դերանունը կարելի է հոդով փոխարինել.

- Իմ երջանկության չափն անչափելի Տխուր աչքերիդ ուրախությունն է....
- Վա՛խ, մեր կյանքը սևով անցավ, Աշխարհից բան չիմացանք:
- Ինչ ունեցել է ժողովուրդը քո Յնուն, անցյալում - լուսավոր ու վեհ, Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խոհ-Ողջը հավաքել և քե՛զ է տվել:
- Արև ունես քո աչքերում, Քո աչքերում, քո ձեռքերում, Քո այդ փամփիլիկ թափկներում:

- 1) ինը
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ութ

22 Ո՞ր շարքում են միայն առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունները.

- 1) ամեն մի, այսչափ, որքա՞ն
- 2) ուրիշ, այդպես, ինչ-որ
- 3) ո՞րերորդ, ոչ ոք, իրար
- 4) ինչու՞, այնքան, որոշ

23 Ո՞ր շարքի բոլոր բայերն են **-ել-** խոնարհման.

- 1) չեն շարժվում, շատացրել են, բարձրացող, կդարձնի
- 2) հեռացրել են, գնացել, արածում է, պիտի խոսեիր
- 3) փակցրած, պիտի կայունացնեն, կկայունանա, վառված
- 4) տարած, վերադարձրու՛, գոհացնում են, կդիմադրի

24 Ո՞ր շարքի բոլոր բայերն են ըղձական եղանակով.

- 1) չխնդրեի, հուսահատվեմք, խոսի, մոտեցրի
- 2) լինեմ, տեսնեի, կայինք, չխոնարհվեմ
- 3) հուսանք, չեմ ասի, չգամ, չերգեին
- 4) կատարի, դառնանք, չկարդային, խնդրեմ

25 Ո՞ր շարքում կա բաղադրյալ դիմավոր բայածև.

- 1) Եթե հիվանդ ես դու, և տկար է ոգիդ, Եթե հոգնություն է... քո երակներում, Այս երգս քեզ չի՛ ամոքի...
- 2) Լավություն արա ու ջո՛ւրը նետիր... Թաքուն մի՛ հուսա հատուցում ու վարձ:
- 3) Ի՛նչ քաղցր է նստել այստեղ, Ժպտալ քո խոսքին սեթևեթ...
- 4) Ախր ես ինչպե՞ս վեր կենամ գնամ, Ախր ես ինչպե՞ս ուրիշ տեղ մնամ...

26 Ո՞ր նախադասության մեջ կա մակբայ.

- 1) Եվ հիշում ես քո որդուն, որ հեռացել է վաղուց,-  
Ո՞ւր է արդյոք հեռացել, մա՛յր իմ անուշ ու անգին:
- 2) Դիմեցե՛ք դեպ անհայտ հեռուները, և հեռուները ձեզ անմահություն՝ են կտան....
- 3) Եվ իմացե՛ք ուրեմն, որ ոչ մի աշխատանք  
Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը:
- 4) Լուսինը որդուս օրոցքն է ոսկի,  
Ու ես եմ կախել աստղերը վրան:

27 Ո՞ր նախադասության մեջ է ստորադաս նախադասությունը գերադասին կապակցվել շաղկապով.

- 1) Միջնադարյան գրիչները գրքի մասին մտածել ու գրել են այնպես, ինչպես կգրեին մարդու մասին:
- 2) Ես պատմում եմ այն, ինչ տեսել ու զգացել եմ սեփական փորձով:
- 3) Ես, որ եղել եմ լույսի օրհներգուն, երդվյալն ու հման, քեզ էի օրհներգուն, խավա՛ր...
- 4) Այնտեղ, ուր օձն էր սիրում պառկել ու տաքանալ, ցածրիկ թփերում աղավնին բույն էր հյուսում:

28 Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ *չկա*.

- 1) Իզուր փորձեցի ներողամտության մի նշույլ գտնել այդ սև զգեստների և խոժոռ հայացքների արանքում:
- 2) Իմ մեջ տիեզերական գեղեցիկն է ապրում, և գեղեցկության արևներն են բոցավառում իմ հոգուն:
- 3) Փորձառու ֆուտբոլիստը մարզիչի հրահանգով պատրաստվում էր փոխարինել խաղի ընթացքում վնասվածք ստացած ընկերոջը:
- 4) Մայրը տարիներ շարունակ սպասում էր օտարության մեջ գտնվող որդու վերադարձը:

29 Ո՞ր նախադասության մեջ կա բառագործածության սխալ.

- 1) Փոխանակ տքնաջան աշխատելու և պարապելու՝ ողջ օրը անգործ թափառում է:
- 2) Հեռվից լսվում էր փոթորկված ծովի ալիքների հզոր շառաչյուն:
- 3) Ես քեզ մոտ եմ եկել այն հույսով, որ ինձ նեցուկ կլինես այս դժվար պահին:
- 4) Իմ մանկության ընկերոջը ես շուտվանից խոստացել եմ վերահասու լինել այդ խճճված գործին:

30 Ո՞րն է պարզ նախադասություն (նախադասությունները կետադրված չեն).

- 1) Երկար սպասված գարո՛ւն ու սիրտս արթնանում է ձմեռային միրհից:
- 2) Զգիտեմ այս տխուր աշխարհում որն է լավ որը վատ...
- 3) Ինչպե՛ս է կողոպտված սպանված այս գյուղում փրկվել այս երինջը:
- 4) Խնդրում էր իր ընկերոջ մասին ոչ մի աննպաստ կարծիք չհայտնեմ:

**31** Ո՞ր պարբերության մեջ համաձայնության սխալ *չկա*.

- 1) Անցավ երկու տարի: Վանականների խումբը գիշերը քայլում էր, ցերեկը թաքնվում որևէ ապահով տեղում: Խմբից ոմանք ապաստանել էին աչքից հեռու գտնվող մի բացատում:
- 2) Շուրջը թագավորում էր ոսկին, ամենուրեք աչքի էր զարնում անգին ճենապակյա սկահակ ու անոթներ: Իսկ դրվագազարդ սեղանը ծանրաբեռնված էր աշխարհի տարբեր ծայրերից բերված բարիքներով:
- 3) Առավոտյան շուտ արթնացա: Դիմացի տան պատուհանին էին հասել արդեն արևի շողերը: Իսկ ինձ՝ որպես այդ սպանության ամբաստանյալ, բազմաթիվ անակնկալներ էին սպասվում:
- 4) Յուրաքանչյուր մարդ՝ չափահաս թե դեռատի, պիտի անեծքով հիշի Թալեաթ անունը և նրա զործը: Նրա հրամանով էր, որ ծնողներս, եղբայրս, հարազատներս, իմ ժողովրդի մի ստվար հատված սպանվեց:

**32** Տրված նախադասություններից որո՞ւմ բացահայտիչ *չկա* (նախադասությունները կետադրված չեն).

- 1) Ասորեստանի թագուհի Շամիրամը լսած լինելով Արայի բոլորին ապշեցնող արտառոց գեղեցկության մասին տոչորվում էր նրան տիրանալու անհագ ցանկությամբ:
- 2) Այդ առեղծվածային դրամները իբրև արծաթյա և ոսկյա բախտավորության խորհրդանիշներ հատուկ կտրվել էին նոր տարվա համար:
- 3) Նրան մեծ պատիվներով ու շուքով առաջնորդեցին Աշոտ արքայազնի հոր Գագիկի նստավայրը:
- 4) Միակ մարդը որ կողմնակից էր բյուզանդական կայսեր Կեսարի հրամանին նրա հավատարիմ զինակիցն էր:

**33** Ո՞ր դեպքում է դերբայական դարձվածով պարզ նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդ նախադասության.

*Դավիթը մեծանալով ու հզորանալով Սասունից պետք է դուրս քշեր Մսրա Մելիքի՝ հայերին հարկատու դարձնել փորձող մարդկանց:*

- 1) Երբ Դավիթը մեծանար ու հզորանար, Սասունից պետք է դուրս քշեր Մսրա Մելիքի այն մարդկանց, որոնք հայերին փորձում էին հարկատու դարձնել:
- 2) Դավիթը մեծանալով ու հզորանալով Սասունից պետք է դուրս քշեր այն Մսրա Մելիքի մարդկանց, որ փորձում էին հարկատու դարձնել հայերին:
- 3) Դավիթը մեծանալով ու հզորանալով Սասունից պետք է դուրս քշեր Մսրա Մելիքի այն մարդկանց, որոնք փորձում էին հայերին հարկատու դարձնել:
- 4) Դավիթը մեծանալով ու հզորանալով Սասունից պետք է դուրս քշեր Մսրա Մելիքին, որը փորձում էր հայերին հարկատու դարձնել:

**34** Տրված նախադասության մեջ կետադրական ստորև նշված կանոններից ո՞րը *չկա* (նախադասությունը կետադրված չէ)։

*Եվ քրտինք թափելով ժողովուրդը աշխատասեր հրաշագործ ծով համբերությամբ հողին վերադարձրեց իր երբեմնի քնքշությունը անտառներից զմրուխտաշող պերճանքը:*

- 1) զեղչված անդամ
- 2) բազմակի անդամներ
- 3) դերբայական դարձված
- 4) հետադաս որոշիչ

**35** Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ *չկա*։

- 1) Դիլան դային տեսավ՝ ինչպես արնոտ միրիավը մամռոտ քարից վայր ընկավ թփուտների մեջ և ափսոսանքով նայեց միրիավի հետևից։
- 2) Միրիավն էր. քուջուջ անելով փոխում է արնագույն տոտիկները և կտուցով փորփորում է լորենու՝ վաղուց դեղնած տերևները։
- 3) Լուսնկա գիշերներից ծովափին՝ խարույկի մոտ, երիտասարդը ձկնորսների հետ ունկնդրում էր նրանց քաղցրահունչ սազի հոգեհմա ելևէջները, ծովի անուշ ձայնը։
- 4) Երբեմն նրա աչքին ընկնում էր մի շքեղ բզեզ կամ թիթեռ՝ գունավոր թևերով և ակնապիշ դիտում էր, թե ինչպես են մրջյուններն անընդհատ աշխատում։

**36** Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված *չէ*։

*Թեև շա՛տ էր ծերացել Սասդին, սակայն նրա հոգին երազի աչքերով և ականջով երազի տեսնում էր ու լսում աշխարհի չքնաղ իրերն ու ձևերը, երգերն ու լռությունը անհայտ ոլորտների, որովհետև տակավին զրույց էր անում նրա հետ բանաստեղծության կախարդ ոգին:*

- 1) փոխաբերույթ
- 2) մակդիր
- 3) համեմատություն
- 4) շրջադասություն



37

Նախադասությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում տրված նախադասությունների տրամաբանական և քերականական ճիշտ հաջորդականությանը.

1. Նա սկզբում թվարկում է արգելվածները, որոնց մեջ էին բոլոր սողունները:
2. Բոլորը հնազանդվեցին, թեև դժվար էր հրաժարվել դարերով եկած սովորությունից:
3. Քանի որ մինչ այդ Հայաստանում օգտագործում էին ամեն տեսակ միս, արքան գրեց, թե դրանցից որը կարելի է ուտել, որը՝ ոչ:
4. Ասում են՝ հայ ժողովրդի քաղաքակրթության հարցում մեծ նշանակություն են ունեցել Վաղարշակ թագավորի քառասուն հրովարտականները, որոնցից մեկը նվիրված էր միս ուտելուն:

- 1) 4, 2, 3, 1
- 2) 4, 3, 1, 2
- 3) 3, 2, 1, 4
- 4) 4, 2, 1, 3

38

Ո՞ր շարքում են նշված հայագիտության օտարազգի երախտավորները.

- 1) Ֆ. Սյուլլեր, Ֆ. Ռիվոլա
- 2) Ա. Մեյե, Յ. Օրբելի
- 3) Լեո, Յ. Հյուբշման
- 4) Ն. Մառ, Ֆ. Վերֆել

39

Ըստ Մովսես Խորենացու «Հայոց պատմության»՝ վիպական ո՞ր հերոսի մասին է տրված հատվածը.

«Եվ ո՞ր իսկական մարդը, որ համակրում է արիական բարքը և խոհականությունը, չի զվարճանա սրա հիշատակությամբ և չի ձգտի նրա նման մարդ լինելու: Նա տղամարդկանց գլուխ կանգնեց և ցույց տալով քաջություն՝ մեր ազգը բարձրացրեց, և մեզ, որ լծի տակ էինք, դարձրեց շատերին լուծ դնողներ և հարկապահանջներ...»:

- 1) Արա Գեղեցիկի
- 2) Տիգրանի
- 3) Հայկի
- 4) Արտաշեսի

40

Սասնա հերոսներից ո՞վ է հիմնադրել Մարութա Աստվածածին վանքը.

- 1) Դավիթը
- 2) Սանասարը
- 3) Գագիկ թագավորը
- 4) Մեծ Միերը

41 Պնդումներից որի՞ մեջ կա սխալ.

- 1) Ըստ Պարույր Սևակի՝ *«Սայաթ-Նովան ազգային է Գողթան երգիչների չափ»*։
- 2) Ներսես Շնորհալին գրել է չափածո խրատներ, իսկ ժողովրդական առակները բանաստեղծորեն առաջինը մշակել է Ֆրիկը։
- 3) Մ. Նալբանդյանը խորապես գիտակցում էր ազգին ծառայելու իր առաքելությունը. *«Չիք իմ այլ նպատակ առաջի, եթե ի հայրենիս մեռանիլ, վասն հայրենյաց մեռանիլ»*։
- 4) Նարեկացին «Մատյան ողբերգության» պոեմը, տաղերը և գանձերը գրել է գրաբարով։

42 Տրված հատվածներից որո՞վ է ավարտվում Լևոն Շանթի «Հին աստվածներ» դրաման.

- 1) **ԱԲԵՂԱՆ** – *(Կցնցվի, կդառնա ծովուն ու թևերը կարոտակեզ առաջ պարզելով)*  
Դե՛, բաց գիրկդ, Սեդա՛, բաց թևերդ. ահա՛ հույզքը ջրերուն, ահա՛ վազքը փոթորկին. բաց թևերդ ու նորեն փարած քու խնկելի մարմնիդ, նորեն շունչդ շնչիս, ալիքներուն մեջեն, անցնիմ այն նո՛ր ու մե՛ծ անծանոթին, նոր գոյության ու նոր կյանքին. ա՛ն, որ խոստացեր ես ինձի։ Բաց գիրկդ, Սեդա՛...
- 2) **ԱԲԵՂԱՆ** – Մահը ա՛ն է, հո՛ն ա՛լ, այս ձեր անապատը, այս վախի ու մեռելության կյանքը. իսկ հոն ազատն է. հույզն ու շարժումը. հոն կյանքն է, և ես կուզեմ կյանքին գիրկը... *(Հանկարծ ուժով մը կհրե, կնետե գետիմ)* հեռո՛ւ ճամփես։ Ես կուզեմ ապրի՛մ, ապրի՛մ։ Սեդա՛... *(Կնետվի ծովը)*։
- 3) **ՁԱՅՆԸ** – Իզո՛ւր հանեցիր աչքերդ։  
**ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ** – *(Վախեն ետ-ետ երթալով)* Որո՞ւն ձայնն ես դուն... Կուզեի նայիմ աչքերուդ խորքը...  
**ՁԱՅՆԸ** – Իզո՛ւր հանեցիր աչքերդ։  
**ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ** – Իզո՞ւր...  
4) **ԲՈԼՈՐԸ** – *(Քար լռություն. գլուխները կկախեն վար)*։  
**ԿՈՒՅՐ ՎԱՆԱԿԱՆԸ** – *(Ձեռքերը վեր բարձրացնելով)* Ուրեմն... Աստվա՛ծ իմ։  
**ՂԱԶԱՐ ՎԱՆԱԿԱՆ** – Այո՛, Աստվա՛ծ։ Աստծու վրեժն էր ասիկա։ Եկեղեցին քանդել ուզելը անպատիժ չի մնար։ Մեծի վրեժը ինկավ ամենեն փոքրի գլխուն։

43

Տրված են հատվածներ Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Վ. Տերյանի, Ե. Չարենցի ստեղծագործություններից. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ նշում բանաստեղծական հատվածի համապատասխանությունը վերնագրին.

1. Ապարանքի երենոսյան դռներից  
Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.  
Մանկլավիկներ ու նաժիշտներ ցնծալից  
Նվագում են, ու երգում են, ու պարում...
2. Է՛յ հին ծանոթներ, է՛յ կանաչ սարեր,  
Ահա ձեզ տեսա, ու միտս ընկան,  
Առաջս եկան երջանիկ օրեր,  
Սիրելի դեմքեր, որ հիմի չկան:
3. Թող գուժկան գիշերն ահասատ դավե -  
Որքան մութը սև՝ ես այնքան համառ,  
Երկնի՛ր, ի՛ն երկիր, հավատով անմար,  
Սուրբ է քո հոգին, և պսակդ՝ վեհ:
4. Հոգուս մեջ կարծես հնոցներ կային,  
Եվ աչքերիս մեջ – խարույկներ լավիլեզ:  
Բայց մարմինս՝ հավե՛րժ, հավե՛րժ մարդկային՝  
Ապրել էր ուզում...

ա) «Իջնում է գիշերն անգութ ու մթին...»

բ) «Հավերժական սերը»

գ) «Դանթեական առասպել»

դ) «Անուշ»

ե) «Թմկաբերդի առումը»

1) 1- բ, 2- դ, 3- ա, 4- գ

2) 1- ե, 2- դ, 3- ա, 4- գ

3) 1- բ, 2- ե, 3- գ, 4- ա

4) 1- ե, 2- դ, 3- գ, 4- ա

44

Րաֆֆու «Սամվել» պատմավեպի տվյալ հատվածում ո՞ւմ խոհերն են ներկայացված.

«Ապերա՛խտ Բյուզանդիոն, քո վարմունքը աններելի կմնա իմ սրտում... Դու վատությամբ վարձատրեցիր իմ հայրենիքի մատուցած ծառայությունները... Քանի՛, քանի՛ անգամ մենք հեռացրինք քո գլխից պարսկական սուկալի սուրը... քանի՛, քանի՛ անգամ ազատեցինք քեզ անոթալի անկումից... Իմ հայրենիքը մի անխորտակելի վահանի պես միշտ պատսպարեց քեզ արևելյան խուժադուժների արշավանքներից... իմ հայրենիքը կրեց բարբարոսների հարվածները և քեզ ողջ պահեց... Մենք թողեցինք հեթանոս պարսիկին և քո ձեռքը բռնեցինք: Իսկ դու միշտ դավաճանեցիր մեզ... Ես իմ ընդդիմության համար դատապարտվեցա և աքսորվեցա... Բայց նախախնամության աջը երկար չի թողնի աքսորյալին այստեղ... Երբ նա ոտք կդնե հայրենի հողի վրա, դու կկրես քո պատիժը, նենգավո՛ր Բյուզանդիոն...»:

- 1) Արշակ Երկրորդի
- 2) Սահակ Պարթևի
- 3) Վասակ Մամիկոնյանի
- 4) Ներսես Մեծի

45

Դ.Վարուժանի «Յունձք կժողվեն...» բանաստեղծության տների երկրորդ տողերի հերթականությունը ո՞ր շարքում է ճիշտ նշված.

1. - Կաքավը կուլա...
2. - Վարդենին թաց է...
3. - Անուշ են հովեր...
4. - Ասուպը անցավ...

- 1) 3, 1, 4, 2
- 2) 2, 1, 3, 4
- 3) 1, 4, 2, 3
- 4) 4, 3, 1, 2

46

Տրված են տարբեր ժանրերի բնութագրումներ. ո՞ր շարքի բոլոր պատասխաններն են ճիշտ նշում ժանրի և նրա բնութագրման համապատասխանությունը.

1. Փոքր ծավալի արձակ ստեղծագործություն է, որտեղ դեպքերն ունենում են սուր ընթացք և անսպասելի ավարտ:
2. Թատերական ժանր է, որը միջին տեղ է գրավում ողբերգության և կատակերգության միջև, արծարծում է հոգեբանական խնդիրներ:
3. Չափածո մեծ ծավալի ստեղծագործություն է, որտեղ կա դիպաշար. այդ դիպաշարը երբեմն ուղեկցվում է հեղինակային միջամտություններով:
4. Քառատող բանաստեղծություն է, որն ունի փիլիսոփայական բովանդակություն:

- ա) քնարական պոեմ
- բ) նորավեպ
- գ) դրամա
- դ) քառյակ
- ե) քնարաէպիկական պոեմ

- 1) 1- գ, 2- բ, 3- դ, 4-ա
- 2) 1- բ, 2- գ, 3- ե, 4-դ
- 3) 1- բ, 2- ե, 3- ա, 4-դ
- 4) 1- բ, 2- գ, 3- ա, 4-դ

47

«Գևորգ Մարգաբետունի» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւն կա սխալ.

- 1) Մուրացանը վեպում պատկերում է հերոսների հոգեկան ապրումները, Գևորգ Մարգաբետունու տագնապները իր միակ որդու՝ Գոռ իշխանիկի ճակատագրի համար:
- 2) «Գևորգ Մարգաբետունի» վեպի կենտրոնական դեմքը Գևորգ իշխանն է, որը հանուն հայրենիքի ջանք չի խնայում երկրի կենտրոնախույս ուժերին միավորելու համար:
- 3) Մուրացանն իր վեպում պատկերել է 10-րդ դարի դեպքերը՝ հայերի պայքարը հազարացիների դեմ, և օգտվել է պատմիչներ Յովհաննես Դրասխանակերտցու ու Թովմա Արծրունու երկերից:
- 4) Վեպում Մուրացանը մեծ տեղ է հատկացրել հերոսների՝ Սահականույշի և Սեդայի, Գևորգ Մարգաբետունու և Սահակ Սևադայի, Մարգաբետունու և Ասպրամի, Մարգաբետունու և Յլիկ Ամրամի երկխոսություններին:

48 Թվերի և տառերի դասավորության ո՞ր շարքն է ճիշտ նշում տրված ստեղծագործությունը՝ լույսընծայման համապատասխան տարեթվով.

- |                                     |         |
|-------------------------------------|---------|
| 1. Վ. Տերյան՝ «Մթնշաղի անուրջներ»   | ա) 1907 |
| 2. Ավ. Իսահակյան՝ «Երգեր ու վերքեր» | բ) 1912 |
| 3. Մ. Մեծարենց՝ «Նոր տաղեր»         | գ) 1898 |
| 4. Դ. Վարուժան՝ «Չեթանոս երգեր»     | դ) 1908 |

- 1) 1-ա, 2-գ, 3-դ, 4-բ
- 2) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-բ
- 4) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա

49 Նշվածներից ո՞րը Համո Սահյանի բանաստեղծական ժողովածուն *չէ*.

- 1) «Ծիածան»
- 2) «Որոտանի եզերքին»
- 3) «Իրիկնահաց»
- 4) «Ժայռից մասուր է կաթուն»

50 Ո՞ր պնդումը եղիշե Չարենցի ստեղծագործության վերաբերյալ ճիշտ *չէ*.

- 1) «Դանթեական առասպել» պոեմում Չարենցը ականատեսի աչքերով նկարագրել է Վանը՝ *Մեռած Քաղաքը*:
- 2) «Տաղարան»-ում ընդգրկված են «Կուզեմ հիմի փչե զուռնեն...», «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում...», «/Հայաստանին/», «Տաղ անձնական», «Էլի գարուն կգա, կբացվի վարդը...» և մի շարք այլ բանաստեղծություններ:
- 3) «Գանգրահեր տղան» չափածո նովելում Չարենցը տալիս է գալիք Հայաստանի պատկերը:
- 4) «Դեպի լյառը Մասիս» պոեմում Չարենցը ներկայացնում է Խաչատուր Աբովյանի վերջին գիշերվա խոհերն ու ապրումները, որոնցով միաժամանակ ընթերցողին է փոխանցում սեփական տազնապներն ու խոհերը:

## Բ մակարդակ

51 Ձևակերպումներից ո՞րն է սխալ.

- 1) Ժամանակակից հայերենն ունի վեց ձայնավոր և երեսուն բաղաձայն հնչյուններ:
- 2) Ձայնավորների ու երկհնչյունների փոփոխությունը կամ սղունը կոչվում է հնչյունափոխություն:
- 3) *Ո* և *Ե* տառերը արտահայտում են թե՛ մեկ՝ *օ, է*, թե՛ երկու՝ *վօ, յէ*, հնչյուններ:
- 4) *Յ* կիսաձայնը թե՛ ձայնավոր է, թե՛ բաղաձայն:

52 Ըստ իրենց թվային արժեքի՝ տրված տառերն ու տառակապակցությունները ո՞ր շարքում են ձախից աջ հաջորդականությամբ աճման կարգով ճիշտ նշված.

- 1) ՇԺԵ, ՐՇ, ՑՍ
- 2) ԺԱ, ԽԵ, ԼԷ
- 3) ՌԴ, ՌԹ, Ռ
- 4) ՏՆԽ, ՈՒՉ, Վ

53 Տրված շարադրանքի համարակալված բառերում բաց թողած տառերը (տառակապակցությունները) պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված.

*Պապի շքախմբի անդամները զբոսնում էին հե-ենական (1) հինավուր- (2) մայրաքաղաքում և դիտում շուրջբոլորը: Շուկայի եռուն խլրտու-ը (3) ապշեցնում էր սիրիական երկարաքղանցք հագուստները խառնվում էին բյուզանդական ոսկեվառ պատմուճանների: Կային հր-ա(4) վաճառականներ՝ գգ-շավոր(5), քննախույզ, սևամորթ գերիներ, խր-վիլակներ (6) հիշեցնող հաշ-անդամներ (7): Մի կին խրթին բարբառով ինչ-որ անե-քներ (8) կամ աղո-քներ (9) էր մրմնջում: Արաբները վաճառում էին ուղտեր ու ձիեր՝ շքեղ թա-բերով(10):*

- 1) 1-լլ, 2-ց, 3-կ, 4-յ, 5-ույ, 6-տ, 7-մ, 8-ց, 9-թ, 10-ն
- 2) 1-լ, 2-ծ, 3-կ, 4-յ, 5-ույ, 6-թ, 7-մ, 8-ծ, 9-տ, 10-ն
- 3) 1-լ, 2-ծ, 3-ք, 4-յ, 5-ու, 6-թ, 7-վ, 8-ձ, 9-դ, 10-մ
- 4) 1-լլ, 2-ց, 3-ք, 4-ե, 5-ու, 6-տ, 7-մ, 8-ծ, 9-թ, 10-մ

54 Ո՞ր շարքի բոլոր բառերում կա երկհնչյունի հնչյունափոխություն.

- 1) վարագուրել, գաղթավայր, ընկուզենի
- 2) զուգապար, ուխտադրժորեն, վայրկենական
- 3) պատենավոր, մրցութային, խուսանավել
- 4) մահագույժ, հեծելագոր, պատանեկան

55 Ո՞ր շարքում կա բառի իմաստային բացատրության սխալ.

- 1) լառ- բարձրահասակ, խաշամ- աշնանը ծառերից թափված տերևներ
- 2) ծնակ- արևազուրկ, ստվերոտ տեղ, նարոտ- կախարդական հուռութք
- 3) պարտասուն- ուժասպառ, ապիրատ- անհրավ
- 4) ոսկեման - աստղերից հյուսված, ժպրիել- հանդգնել

56

Տրված են համանուններ՝ մեկ բացատրությամբ. ստորև բերված պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ համապատասխանեցված երկրորդ բացատրությունները համանուններին.

1. հույլ - *աստղաբույլ*
2. մայր - *ծառատեսակ*
3. արոր - *երկրագործական գործիք*
4. դար - *հարյուրամյակ*

- ա) մթություն  
բ) դանդաղկոտ  
գ) զառիվայր բարձրություն  
դ) ջրային թռչուն

- 1) 1 - դ, 2 - գ, 3 - ա, 4 - բ
- 2) 1 - բ, 2 - ա, 3 - գ, 4 - դ
- 3) 1 - ա, 2 - դ, 3 - բ, 4 - գ
- 4) 1 - բ, 2 - ա, 3 - դ, 4 - գ

57

Տրված հատվածում ընդգծված բառերը բառիմաստային ո՞ր խմբին են պատկանում.

Եվ մեր ճարը՝  
Օտարամուտ *ախտի* դիմաց.  
Խնկածավալ մեր տաճարը՝  
Օտարահոտ *աղտի* դիմաց.  
Վերադարձի մեր պատճառը՝  
Մեր հարկադիր գաղթի դիմաց...

- 1) հականիշ
- 2) համանուն
- 3) հոմանիշ
- 4) հարանուն

58

Տրված բառերից քանի՞սն ունեն ընդհանուր արմատ.

Արգելք, անարգանք, արգանակ, հարգել, մեծարգո:

- 1) հինգը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

59

Ո՞ր դեպքում է դարձվածքի իմաստը սխալ բացատրված.

- 1) *ռուբիկոնն անցնել* - հաղթանակել
- 2) *հոգու աչքեր* - ներզգացողություն
- 3) *ձեռքը բռնել* - դժվար, նեղ պահին օգնել
- 4) *մութ տեղը քար նետել* - աննպատակ գործել

60 Ո՞ր նախադասության մեջ կա ներգործական սեռի բայ.

- 1) Գարնանը Արաքսը ելնում է իր ափերից՝ վարար ջրերով տիղմ կուտակելով լայն տափարակի վրա:
- 2) Վաղ մանկությունից զրկվելով ծնողներից՝ Արսենը մնաց միայնակ, մնաց որբ՝ երբեմն-երբեմն արժանանալով հարևանների կարեկցանքին:
- 3) Մտնելով բակ՝ ինձ այնպես թվաց, թե սպիտակ տան ներսում ինչ-որ մարդիկ են հավաքվել, ու մեկը, իր ափերից դուրս եկած, գոռգոռում է:
- 4) Բայց, ինչպես ամեն ինչից երևում էր, Պետրոսը չէր դառնալու այն առաքյալը, որպիսին անհրաժեշտ էր գյուղին:

61 Ո՞ր շարքի բոլոր բայաձևերն են ապառնի ժամանակով.

- 1) չեմ նկարի, մոռացիր, դառնանք, չգիտեմ
- 2) կերազենք, չենք վանելու, չես խնայում, ցանկանք
- 3) հավաքեմ, մի՛ հեռացիր, չնայեց, չի գնահատելու
- 4) բարձրացնեմ, չի մոռանա, չանցնես, լվանամ

62 Տրված բանաստեղծական հատվածներից որի՞ մեջ անկանոն բայ *չկա*.

- 1) *Եվ այդ հիմքի վրա ինքը քանի՜ անգամ  
Մտքով որմ է հանել, խոյակ ու սյուն  
Եվ ձևերն է դրել նոր տաճարի...*
- 2) *Եվ երբ չի մնա ոչ մի հույս գաղտնի,  
Սիրտդ կճչա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս,  
Յողը կգրկես և կհեկեկաս...*
- 3) *Ես չեմ երգելու այժմ շառաչուն  
Գալիքի մասին, որ գալու է դեռ...*
- 4) *Այսպես ասաց հայոց ահեղ արքան,  
Ապա իջավ գահից ոսկեդրվագ  
Եվ ծանրաթաթ քայլեց սրահներով:*

63 Ընդգծված բառերի ձևաբանական վերլուծության մեջ ո՞ր շարքում կա սխալ.

Հազարավոր *չորացած* ծաղիկներ բուրոն էին խոտի խրճերի *միջից*:

Քո հոգու վրա կա մի վարագույր, - ո՞վ ես դու, ո՞վ ես,- բնավ *չգիտեմ*:

Քիչ անց *քամին* սաստկացավ փոթորիկ *դառնալու* չափ...

*Իբրև* Հիսո՞ւս ես դու *արդյոք* լյառ բարձրանում...

- 1) *իբրև* - նախադիր կապ, *արդյոք* – վերաբերական
- 2) *չորացած* - հարակատար դերբայ, չեզոք սեռ, *միջից* - հետադիր կապ
- 3) *չգիտեմ* – պակասավոր բայ, ըղծական եղանակ, ո՞վ- հարցական դերանուն
- 4) *քամին* – հասարակ գոյական, -ու հոլովում, *դառնալու*- անորոշ դերբայ



**64** Ո՞ր նախադասության մեջ ուղիղ խնդիր *չկա*.

- 1) Բայց Պետրոսին հարկավոր էր մի ծածկ՝ անձրևից պատսպարվելու համար, ուստի այդտեղ գտնվող թախտին շտապ-շտապ փռելով իր անկողինը՝ պառկեց քնելու:
- 2) Ծաղկափոշու մեջ թաթախված բզեզին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:
- 3) Պատշգամբի սյունաշարերին կախված գույնզգույն լապտերները մոգական խորհրդավորություն էին տալիս անտառապատ բարձունքներով պարսպված ձորակին:
- 4) Ժայռը նիրհելով ունկնդրում է ամպերի շրշուները, մասրենին իր ծաղկաբաժակը պահել է ոսկեզօծ արևի տակ, և կանաչ դաշտում արածում է մի աստղազարդ ձի:

**65** Փակագծերում տրված բառերի ո՞ր հերթականությունն է համապատասխանում նախադասության մեջ դրանց տեղադրման ճիշտ կարգին (բառերը տրված են ուղիղ ձևով).

..... ջլուտ բազուկների ..... արմատները, որ կիսով չափ ....., ոլորվել էին ապառաժների վրայով և ..... հողի մեջ:

(1.մխրճվել 2. փտել, 3. դարբին, 4. նմանվել)

- 1) 3, 4, 1, 2
- 2) 3, 1, 4, 2
- 3) 3, 4, 2, 1
- 4) 1, 4, 3, 2

**66** Տրված բանաստեղծական հատվածում քանի՞սը պարզ ստորոգյալ *չեն*.

Եվ եթե պիտի գիր ու տառ հիշվի,  
Ապա նա ինքն է այն մեծատառը,  
Որով հասարակ ու պարզուկ բառը  
Աճում է, հասնում խորհրդանիշի,  
Եվ... մարդը ձգվում ու դառնում է Մարդ...

- 1) ոչ մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

67

Տրված նախադասություններում ընդգծված անդամներից քանիսի՞ պաշտոնն է սխալ նշված.

*Չարչու կերպ մտած (ծևի պարագա)՝ ինչպես վիշապ օձ, Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան (ենթակա):*

*Գուցե անցնի խավարակուռ մշուշն (ենթակա) այս չար, և լինենք մանուկ (ուղիղ խնդիր), լինենք մաքուր:*

*Այդպես աննկատ նա ինձ համար դարձավ խորհրդատու (բաղադրյալ ստորոգյալ), ումից ես ոչ մի գաղտնիք չէի թաքցնում (պարզ ստորոգյալ):*

*Ուրախ-ուրախ (որոշիչ) կափկափելով՝ արագիլները պտտվելով իջնում էին իրենց(հատկացուցիչ) բներին:*

- 1) ոչ մեկը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

68

Տրված են բարդ ստորադասական նախադասություններ. պատասխանների ո՞ր շարքում է թվերի և տառերի համապատասխանությունը ճիշտ արտահայտում ստորադաս նախադասությունների բնույթը.

1. Նա ավելի թիֆլիսյան կինտո էր հիշեցնում, որը թյուրիմացաբար կամ պատահմամբ ժամանակավորապես կառապանի պաշտոն էր ստանձնել:
2. Հենց հարևանները չգիտեին՝ ինչպես հանգստացնեին ծերունուն պառավի մահից հետո:
3. Այն, որ բարեկամները այդ երիտասարդի երեսը օրերով չէին տեսնում, զարմացնում ու զայրացնում էր բոլորին:
4. Նրանց բաժանման հիմնական պատճառը հենց թերևս այն էր, որ յուրաքանչյուրը իբրև թե ուզում էր օգնել, բայց իրականում ոչինչ չէր անում:

- ա) ծևի պարագա  
բ) որոշիչ  
գ) ուղիղ խնդիր  
դ) ստորոգելի  
ե) ենթակա

- 1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ
- 4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ

69

Տրված նախադասություններից որի՞ մեջ շարադասական սխալ *չկա*.

- 1) Մեկիկ-մեկիկ աստղերը հանգչում էին, և բարձր երկնականարի վրա փայլում էր միայն լուսաստղը:
- 2) Այգու կողքի բարձր թմբի հետևում թաքնված տղան նկատեց, թե ինչպես գաղտագողի Սիմոնը ստավ ցանկապատից ներս:
- 3) Այս անգամ հետը մի թեթև գույնզգույն շալ էր վերցրել, որպիսին գլխարկի տեղ գործածում են կանայք ամառանոցում:
- 4) Երկարաճիտ ճամփորդական կոշիկներից մեկը հագին էր, մյուսը անփուլթ ընկած էր մահճակալի առջև:

70

Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված պարզ նախադասության.

- 1) Պատանության տարիների իմ ընկերներն էին, որ դժվար պահին ինձ դարձյալ օգնության ձեռք մեկնեցին:  
*Պատանության տարիների իմ ընկերները դժվար պահին ինձ օգնության ձեռք մեկնողներն էին:*
- 2) Ջայրացած Արաքսը խոր վրդովմունքով դուրս էր նետվում յուր ափերից՝ տեսնելու, թե ինչ արհավիրք է կատարվում իր շուրջը:  
*Ջայրացած Արաքսը խոր վրդովմունքով դուրս էր նետվում յուր ափերից՝ տեսնելու իր շուրջը ինչ արհավիրք կատարվելը:*
- 3) Բայց մենք երբեք չպիտի մոռանանք այն մասին, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր մայրենին է:  
*Բայց մենք երբեք չպիտի չմոռանանք մեր ժառանգության մեծագույն գանձը մեր մայրենին լինելու մասին:*
- 4) Նա նման չէ այն ծերունիներին, որոնք ամբողջ օրը գյուղամիջում թագբեհի հատիկներ են գլորում:  
*Նա նման չէ ամբողջ օրը գյուղամիջում թագբեհի հատիկներ գլորող ծերունիներին:*

71

Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարբերակն է ճիշտ.

*Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին, որ, այո՛, շատ դժվար կլինի մեկնելը, ապա հարցրեց, թե նա արդյոք կուզեր, որ այդտեղ մնալով՝ ինքը ավելի վատթար դրության մեջ ընկներ:*

- 1) -Շատ դժվար կլինի մեկնելը,- կամաց, դողդոջուն ձայնով ասաց նա Նունեին, ապա հարցրեց,- ես կուզեի՞, որ այստեղ մնալով՝ դու ավելի վատթար դրության մեջ ընկնեիր:
- 2) Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին.  
-Այո՛, շատ դժվար կլինի մեկնելը,- ապա հարցրեց,- դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեմ:
- 3) Նա կամաց, դողդոջուն ձայնով ասաց Նունեին, ապա հարցրեց.  
-Այո՛, շատ դժվար կլինի մեկնելը. դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեի:
- 4) -Այո՛, Նունե՛, շատ դժվար կլինի մեկնելը,- կամաց, դողդոջուն ձայնով ասաց նա, ապա հարցրեց,- դու կուզեի՞ր, որ այստեղ մնալով՝ ես ավելի վատթար դրության մեջ ընկնեի:

72

Տրված է համր բնագիր. պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բուժ պիտի լինի.

*Նահրյան այդ քաղաքի(1) մարդաշատ ու աղմկոտ փողոցներով բոլորն անցնում են դանդաղ անշտապ: Մարդիկ ելել են փողոց ուրեմն անկասկած գնալու տեղ ունեն (2) գործի զբոսնելու գնումներ անելու բաղնիք:*

*Բաղնիք առավոտվա վաղ ժամերին միայն կանայք են գնում: Քաղաքում կա միայն երկու բաղնիք (3)երկուսն էլ (4) ասիական: Դրանցից մեկը ծերմակ պատեր ունի իսկ մյուսը (5) եվրոպական համարում ունեցողը (6) կորնթարդ գմբեթ:*

*Կանայք գնում են բաղնիք մի առանձին շուքով (7) կարծես գնում են ծիսակատարության: Առջևից սովորաբար գնում է մի մշակ (8) շալակին պղնձե թասեր սանրեր օճառ լողանալու պարագաներ:*

*Եթե ամառ է աշուն այսինքն (9) մրգի ժամանակ ընտանիքի հայրը առանց այլևայլության պետք է բաղնիք ուղարկի նվեր (10) ձմերուկ սեխ խաղող խնձոր:*

- 1) 1, 3, 4, 5, 6, 8, 10
- 2) 1, 2, 3, 5, 7, 9, 10
- 3) 2, 5, 6, 8, 9, 10
- 4) 2, 4, 5, 6, 8, 9, 10

73

Ո՞ր նախադասության մեջ փակագիծ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն).

- 1) Նույն օրը Ռուստամյանը սեղանի մոտ նստած զուր ճգնում էր յուր մտատանջությունը մոռանալ ուստի վճռեց մեկընդմիջտ վերջ տալ այդ պատմությանը:
- 2) Ապարդյուն մնաց և այսօր այրի Նատալյայի մայրական հանդիմանությունը նա մատուցարանը վերցրեց և լուռ դուրս գնաց գլուխը խորհրդավոր կերպով շարժելով:
- 3) Այդ օրն աշխատեց որպես լարված մի մեքենա սովորաբար օրվա մեջ պարապում էր գրեթե տասնչորս ժամ և բոլորովին չհոգնեց:
- 4) Նատալյա Պետրովնայի հյուրասենյակը լուսավորված էր մի բարձր և գեղեցիկ կանթեղով այդ կանթեղն այրին վառում էր միմիայն այն օրերը երբ հյուրեր պիտի ընդուներ:

74

Պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված.

Այդ աղջիկը երեկ տեսա,  
Յեղ մը միայն, թեթևակի,  
Կարծես ասուպ մը դյուրասահ,  
Որ աչքիդ դեմ կը սայթաքի:

- 1) պարադոքս
- 2) խաչաձևում
- 3) հանգույց
- 4) համեմատություն

75 Տրված պնդումներից որի՞ մեջ կա սխալ.

- 1) Գրաբարը գրավոր հայերենի առաջին շրջանն է, միջին հայերենը՝ երկրորդը:
- 2) Փոխանունությունը դրսևորվում է իբրև առարկաների կամ երևույթների նմանության հիման վրա մի բառի կամ արտահայտության փոխարեն մյուսի գործածություն:
- 3) Լեզվի բանավոր տարբերակը ժողովրդախոսակցական լեզուն է, որը ևս համաժողովրդական է, բայց չունի որոշակիորեն մշակված համակարգ:
- 4) Նույնասկզբի և նույնավերջի առկայությունը միևնույն բանաստեղծական հատվածում ստեղծում է հանգույց:

76 Պարբերությունները նշող թվերի ո՞ր դասավորությունն է համապատասխանում շարադրանքի (տեքստի) քերականական և տրամաբանական ճիշտ կառուցվածքին.

1. 1935 թ. թանգարանի հիմքի վրա կազմակերպվեցին երեք ինքնուրույն թանգարաններ՝ պատմության թանգարանը, ներկայիս Ազգային պատկերասրահը և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանը:
2. Թանգարանին տրամադրվեցին նաև էջմիածնի վանքի, Մոսկվայի Լազարյան ճեմարանի հավաքածուները, Նոր Նախիջևանից Երևան տեղափոխվեցին Ե. Շահագիզի ջանքերով հավաքված թանգարանային արժեքները: Արդեն 1922 թվականին թանգարանն ուներ հնագիտական, պատմագրական, ազգագրական, գեղարվեստական և տնայնագործական բաժիններ:
3. Ներկայումս Հայաստանի պատմության թանգարանում պահվում է շուրջ 250 հազար առարկա: Համալրման հիմնական աղբյուրներն են հնագիտական պեղումների և ազգագրական արշավախմբերի, ինչպես նաև նվիրատվությունների միջոցով ստացված նյութերը: Թանգարանն իր մասնաճյուղերն ունի Մեծամորում և Հառիճում:
4. Հայաստանի պատմության պետական թանգարանը ստեղծվել է հնագիտական, ազգագրական, պատմական նյութերի հավաքածուների հիմքի վրա 1921 թվականի օգոստոսին: Երկու ամիս անց թանգարանը սկսել է ղեկավարել Մարտիրոս Սարյանը: 1921-1922թթ. Թիֆլիսից Երևան փոխադրվեցին Կովկասի հայոց ազգագրական ընկերության հնագիտական ու ազգագրական հարուստ նյութերը և հայագիտական գրադարանը:

- 1) 3, 1, 4, 2
- 2) 3, 4, 2, 1
- 3) 4, 2, 1, 3
- 4) 4, 3, 1, 2

77

Ո՞ր նախադասությունն է իմաստով հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը.

Դանիել Վարուժանը շարունակ փոխում է քնարի լարերը, նորոգում իր արվեստը: Այլ խոսքով՝ նրա ստեղծագործությանը բնորոշ են ընդգրկման արտակարգ լայնությունն և թեմատիկ բազմազանություն, որը պատմական անցյալից հասնում է մինչև ներկան, հսկա քաղաքից մինչև գյուղի հովվերգությունը: Դրա ցայտուն արտահայտությունն է «Հացին երգը»: Այս գրքում քերթողը նպատակ չի դրել տալու ժամանակի գյուղի համակողմանի պատկերը՝ իր խնդիրներով և հակասություններով: Նրան առավել զբաղեցրել է բնականության, հողի ու մարդու ներդաշնակության հարցը: Եթե «Հեթանոս երգեր»-ի «Գողգոթայի ծաղիկներ» շարքում քաղաքը մռայլ գույներով է պատկերվում, ապա «Հացին երգը» ազատ, ծաղկուն հայրենիքի, նրա կենարար ոգու գովերգումն է:

- 1) Դանիել Վարուժանը տվել է գյուղի հովվերգական, երբեմն՝ իդեալական պատկերը:
- 2) Դանիել Վարուժանի ստեղծագործությանը բնորոշ են թեմաների բազմազանություն, տարբեր դարաշրջաններ պատկերող նյութի ընդգրկում:
- 3) Վարուժանը «Գողգոթայի ծաղիկներ» շարքում մռայլ գույներով է պատկերել քաղաքը:
- 4) Բանաստեղծը ճշմարիտ կերպով պատկերել է թե՛ քաղաքի և թե՛ գյուղի կյանքը՝ բոլոր հակասություններով ու խնդիրներով:

78

Ստորև բերված պատասխանների ո՞ր շարքն է ճիշտ նշում տրված հեղինակների և նրանց արտահայտած մտքերի համապատասխանությունը.

1. «Մենք ունենք 850 տարվա պատմություն, թե ինչպես է վարվել մեզ հետ թուրքը... Թուրքը այսօր անկիրթ բարբարոս է, բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավագակ և այն ժամանակ ավելի վտանգավոր կդառնա»:
2. «Մեր ազգի անցածը տխուր է, այն օրերի պատմական հիշատակարաններից արտասուք է հոսում: Մեր ազգի ներկան թշվառ է, ստրկությունը և աղքատությունը բարձրաձայն խոսում են այստեղ»:
3. «Ես կարծում եմ, որ ամեն ազգային նշանակություն ունեցող վեպ պիտի համաշխարհային, համամարդկային մի բան ունենա...»:
4. «Տեսա, որ միայն հայը չի տառապում, բովանդակ աշխարհը լաց ու կոծի մեջ է... ուժեղը լափում է թուլիին»:

- ա) Հովհ.Թումանյան
- բ) Ավ.Իսահակյան
- գ) Դ. Դեմիրճյան
- դ) Րաֆֆի
- ե) Մ. Նալբանդյան

- 1) 1-դ, 2-ե, 3-գ, 4- բ
- 2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ
- 3) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա
- 4) 1-ե, 2-գ, 3-բ, 4-ա

79

Տրված հատվածը Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի ո՞ր դրոշմաչից է.

Թե մինչև հիմա որտեղ որ երգն էր՝  
Այնտեղ էլ նա էր,  
Այսուհետ արդեն որտեղ որ նա էր՝  
Այնտեղ էր երգը:

Առաջին անգամ լայն դահլիճների  
Բեմից էր լսում ինքն իրեն հայը.  
Եվ բոլորովին ուրիշ էր հնչում  
Իր իսկ «Տույ-տույ»-ը,  
«Վայ-լե-լե-վայ»-ը,  
Նո՛ւյն արտն էր հուռթի,  
Նո՛ւյն սերնը ցանված,  
Բայց... խորն էր հերկը,  
Ու բեղուն՝ բերքը:

- 1) Ղողանջ մրցավարտի
- 2) Ղողանջ հրաշագործման
- 3) Ղողանջ հաղթության
- 4) Ղողանջ նվաճման

80

Նշված տեղանունները կապվում են տրված հեղինակների կյանքին ու ստեղծագործությանը. անունների ո՞ր շարքը ո՞ր հեղինակի կյանքին ու ստեղծագործությանն է առնչվում.

1. Կարս, Վան, Արարատ, Դորպատ
2. Գորիս, Սարդարապատ, Չորագյուղ, Մարութա սար
3. Գյումրի, Վենետիկ, Ալագյազ, Բաղդադ
4. Չանախչի, Մոսկվա, Պոլիս, Փարիզ
5. Գանձա, Ջավախք, Սանկտ Պետերբուրգ, Նաիրի

- ա) Ակ. Բակունց
- բ) Ե. Չարենց
- գ) Պ. Սևակ
- դ) Վ. Տերյան
- ե) Հովհ. Թումանյան
- զ) Ավ. Իսահակյան

- 1) 1-բ, 2-զ, 3-ե, 4-դ, 5-զ
- 2) 1-ա, 2-զ, 3-ե, 4-զ, 5-բ
- 3) 1-բ, 2-ա, 3-զ, 4-զ, 5-դ
- 4) 1-ա, 2-դ, 3-զ, 4-զ, 5-ե